

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր

X դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

1. Խաչատուր Աբովյանի հայրենասիրական դասերը: Ճի՞շտ էր արդյոք Աբովյանը, երբ գրում էր.«Օրհնվի էն սհաթը...»(շարունակի՛ր)»։ մեկնաբանի՛ր:

5մ.

2. Ո՞ւմ է նվիրված Գևորգ Էմինի հետևյալ բանաստեղծությունը. ելնելով Էմինի հուշումից՝ վերլուծի՛ր համապատասխան բանաստեղծությունը և գրի՛ր այդ բանաստեղծին բնութագրող շրջասույթը:

Մեզնից շա՛տ էր սիրում նա գարունն ու վա՛րդը

Եվ մեզնից ավելի՛՝ բանաստեղծ ու մարդ էր.

Բայց դարը դաժան էր, իսկ ցարը՝ ոխերի՛մ ,

Եվ նա սուր վերցրեց՝ գրիչի փոխարեն...

Սրո՛վ էր նա զարկում քնարին քերթության.

Եվ չէի՛ն դիմանում լարերը քնքշության...

... Դյուրին է թանաքով գովերգել գարունը.

Եվ դժվա՛ր գարնանը զոհել իր արյունը....

5մ

3.Ո՞վ է Բաֆֆին: Պատմի՛ր այդ գրողի մասին և համեմատի՛ր Վահան և Վասակ Մամիկոնյաններին: Արդարացնո՞ւմ ես Մուշեղի վեհանձնությունը:

5մ.

4. Հիշի՛ր Մայրենիի տոնի մասին և ներկայացրո՛ւ Մայրենիին նվիրված որևէ բանաստեղծություն, ասույթ, ասացվածք և այլն՝ նշելով հեղինակին:

Խոսիր քո՛ մայրենիի մասին:

5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան